ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 147

ք. Երևան 18.10.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00524412, հասցե՝ Ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ. 2/4) միջև 25.03.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/5-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 24,104,350 ՀՀ դրամի գույք, կահույք, որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան Ընկերության կողմից մատակարարվել են ընդամենը 3,089,875 ՀՀ դրամի ապրանքներ, այսինքն 21,014,475 ՀՀ դրամի ապրանքների մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ